ՎԵՐԱԿԱԶՄՅԱԼ ՀՆՉԱԿՅԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

(«Մարտ», «Նոր կյանք»)

Ս. Թ. ՍԱՐԳՍՅԱՆ

1887 թ. ժնևում ստեղծված Հնչակյան կուսակցությունը 90-ական թվականների կոտորածներից հետո ուղղակի ճգնաժամ էր ապրում։ Ստեղծված կացությունը վերլուծելու և ճգնաժամից դուրս գալու նպատակով հնչակյանները 1896 թ. հունվարին Լոնդոնում հավաքվեցին համագումարի։ Այն ընթացավ սուր վիճաբանություններով։ Պատգամավորների մի մասը (Միհրան Տամատյան, Արփիար Արփիարյան, Անտոն Ռշտունի, Միհրան Սվազյան, Հրաչյա Մարով, Վահան Թեքեյան, Վահան Արզումանյան, Լևոն Մկրտիչյան և ուրիշներ) կարծում էր, որ այսուհետև պետք է հրաժարվել մասնակի կռիվներից ու ցույցերից, քանի որ դրանք չեն կարող «օգտակար ըլլալ ապստամբական գործին»[1], որ ցուցարարական կռիվները միայն վնասում են ժողովրդին, անհրաժեշտ է դադարեցնել դրանք և պատրաստվել ընդհանուր ապստամբության։ Նրանք պահանջում էին նաև ծրագրից հանել «սոցիալիզմ» արտահայտությունը, հնչակը կոչել «Հայկական ազգայնական կուսակցություն» պատճառաբանելով, որ, նախ՝ եվրոպական կառավարությունները, թշնաբար վերաբերվելով սոցիալիստական կուսակցություններին, չեն օգնի հայերին, և երկրորդ՝ հնչակն իր բախտը կապելով սոցիալիզմի հետ, լիովին վերացնում է Հայկական հարցը[2]։ Այս պատգամավորների կարծիքով, պետք է հրաժարվել հայ հասարակությունը դասակարգերի բաժանելու գաղափարից, քանի որ այն ջլատում է ազգային ուժերը և խանգարում ազատագրական պայքարին։

Պատգամավորների մյուս մասը՝ Ավետիս և Մարո Նազարբեկյանների ղեկավարությամբ, պնդում էր պահպանել կուսակցության նախկին ծրագիրը, չհրաժարվել «սոցիալիզմ» արտահայտությունից, ընդունել հայ հասարակության՝ դասակարգերի բաժանման փաստը, արևմտահայությանը չհակադրել հայության մյուս հատվածներին և, վերջապես, կուսակցությունից վտարել Արփիար Արփիարյանին։

Տարաձայնություններն այն աստիճան սրվեցին, որ Մ. Տամատյանը, Արփ. Արփիարյանը, Լ. Մկրտիչյանն ու սրանց կողմնակիցները անջատվեցին հին հնչակյաններից և 1898 թ. ստեղծեցին իրենց կուսակցությունը՝ այն անվանելով Վերակազմյալ հնչակյաններ։ Հնչակյանների այս թևն ընտրեց իր կենտրոնը, որի մեջ մտան Արփ. Արփիարյանը, Վ. Թեքեյանը, Վ. Արզումանյանը, Լ. Մկրտիչյանը, Մ. Տամատյանը, Մ. Ավագյանը և ուրիշներ։ Նրանք իրենց կազմակերպություններն ստեղծեցին Փոքր Հայքում, Կիլիկիայում, Կ. Պոլսում և հրատարակեցին «Նոր կյանք», «Մարտ», «Ձայն Հայրենյաց», «Ազգ», «Աղատ բեմ», «Պահակ» և այլ պարբերականներ։

Առավել հայտնի էին «Նոր կյանք» հանդեսը և «Մարտ» ամսագիրը, որոնք լույս էին տեսնում խմբագրական կոլեգիա ստորագրությամբ, սակայն դրանց հրատարակման գործում մեծ դեր էր խաղում արևմտահայ նշանավոր գործիչ Ա. Արփիարյանը։

---

1 *Պատմություն սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության, հ. Ա, Պեյրութ, 1962, էջ 268—269։*

2 *Խ. Հ. Բարսեղյան, Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գիրք Առաջին, Երևան, 1967, էջ 172։*

Ա. Արփիարյանը ծնվել է 1851 թ. դեկտեմբերի 21-ին, Սամսուն քաղաքում։ Սովորել է Կ. Պոլսի թարգմանչաց և Վենետիկի Մուրատ-Ռափայելյան վարժարաններում (այստեղ աշակերտել է Ղ. Ալիշանին)։ 1876-ին մի խումբ երիտասարդների հետ հիմնել է «Արարատյան ընկերություն Հայոց»-ը։ 1878-ից թղթակցել է «Մշակին», մոտ 30 տարի՝ «Հայկակ» ծածկանունով։ Հանդես է եկել նաև «Հրաղդան», «Սկեպտիկ», «Հրպետ» և այլ կեղծանուններով։ Իր բազմաթիվ հոդվածներում արծարծել է արևմտահայությանը հուզող տնտեսական, քաղաքական և մշակութային կենսական հարցեր, պատկերել թուրքական բռնակալության լծի տակ հեծող հայ ժողովրդի կյանքը, գոյապայքարը։ Արփիարյանը քննադատել է եվրոպական դիվանագիտության երեսպաշտությունը հայկական դատի վերաբերյալ, հարել ռուսական կողմնորոշմանը։ 80-ական թթ. սկզբներին տպագրել է առաջին գեղարվեստական երկերը։ 1884-ին մասնակցել է «Արևելք» օրաթերթի հիմնադրմանը, խմբագրել «Մասիս» գրական հանդեսը, 1891—1895 թթ.՝ «Հայրենիք» պարբերականը։ Իր շուրջն է համախմբել երիտասարդ տաղանդավոր գրողների (Գ. Ջոհրապ, Տ. Կամսարական, Լ. Բաշալյան, Մ. Կյուրճյան և ուրիշներ)։ Խուսափելով թուրքական կառավարության հետապնդումներից՝ 1896-ին անցել է արտասահման, եղել է Լոնդոնում, Կահիրեում։ 1895-ին մտել է Հնչակյան կուսակցության շարքերը։ 1898—1901-ին խմբագրել է «Նոր կյանքը», «Մարտը» (Լոնդոն)։ 1902-ին հրատարակել է «Հայ հանդեսը» (Վենետիկ), 1905-ից խմբագրել է «Շիրակը» (Կահիրե)։ Սպանվել է 1908 թ. փետրվարի 12-ին, Կահիրեում, ահաբեկչի ձեռքով[3]։

Այն բանից հետո, երբ Ավ. Նազարբեկյանը Լոնդոնի դատարանի միջոցով կարողացավ պահպանել իր իրավունքը «Հնչակ» թերթի նկատմամբ, վերակազմյալները 1897 թ. ապրիլի 15-ից Լոնդոնում սկսեցին հրատարակել «Մարտը», հայտարարելով, որ «Հնչակ» թերթը դատական վճռի մը համեմատ անձի մը անհատական սեփականությունը նկատվելով Կուսակցությանս պաշտոնական թերթը ասկե ետքը պիտի հրատարակվի «Մարտ» անունով»[4]։ Ա. Արփիարյանը «Մարտում» տպագրում էր ոչ միայն ծավալուն ու բովանդակալից, իրենց կուսակցության հավատամքն արտահայտող խմբագրականներ, այլև զանազան հոդվածներ, ակնարկներ, հրապարակումներ։ Այլ խոսքով, նա թերթի ոգին էր, հենասյունն ու անփոփոխ քարոզիչը։

Թերթը ծավալով մեծ չէր, ընդամենը 4 էջ, սակայն գրեթե բոլոր համարներում մեծ տեղ էր հատկացվում նախորդ հնչակյանների (կամ ինչպես վերակազմյալներն են անվանում ժնևցի-կովկասցիների—Ս. Ս.) գործունեության մանրամասն վերլուծությանն ու, իհարկե, սուր քննադատությանը, ինչպես նաև արտահայտում սեփական տեսակետները արևմտահայոց փրկության ուղիների մասին։

Իրենց համարելով իսկական կուսակցականներ, իսկ «Մարտ» թերթը կուսակցության իսկական օրգան, վերակազմյալները նույնիսկ չէին նշել թերթի լույս ընծայման նպատակը, խնդիրները, միայն շեշտել էին, որ «Հնչակի» համեմատությամբ կլինեն որոշ փոփոխություններ։ Այսպես, նրանք այլևս իրենց դրոշակի վրա չէին ուզում տեսնել «Մահ կամ ազատություն» պատվիրանի «Մահը»՝ «Ազգային ազատությունը կրավե մեզի, ավելորդ է ազգային մահը»։ «Պետք չէ մահը նպատակակետ ընտրել,—գրում էին նրանք,—հարկավոր է խելքով գործել նպատակին հասնելու համար» խելքը ուժանակ մըն է, որ կփշրե ամեն ժայռ»[5]։

Քննադատելով հնչակյաններին՝ թերթը զայրացած գրում է. «Հայի և Թուրքի մեջ պատերազմ է մղվում... բավական եղավ Թուրքը կգործե, հայը

---

3 Ս. Հակոբյան, Արփիար Արփիարյան, Վիեննա, 1922, Գ. Ստեփանյան, Արփիար Արփիարյան, Երևան, 1955։

4 Մարտ, 1897, № 1։

5 Նույն տեղում։

կխոսի» հիշեցնելով մոտ անցյալում նրանց այն սխալ տակտիկայի մասին, երբ դեռ ոչինչ չարած մեծ-մեծ հոխորտանքներ էին թափում թուրքական իշխանությունների հասցեին, դրանով իսկ նրանց զգուշացնելով մոտակա վտանգի մասին (ինչպես եղավ Սասունում, Վանում, Բաղեշում)։ «Հեշտ է Լոնդոն-ժնևներից սպառնալիքներ տեղալ, այլ հարկավոր է ուրիշ ժողովուրդների նման թաքուն նախապատրաստվել և հանկարծակի հարձակվել։ Ավելորդ շատախոսությունը «կրնա մատնություն մը համարվել անցյալին մեջ և դավադրություն ներկայիս համար»[6]։ Այսինքն, ըստ «Մարտի», հայ ժողովուրդն իր ազատության հարցը կարող է լուծել միայն նախապատրաստված համազգային հեղափոխության միջոցով։ Հայ ժողովուրդը «պետք չէ իրարու շփոթե «իրարանցումը» և «հեղափոխությունը»։ Հոն ուր որ ժողովուրդը զենքը ձեռքը ինք չի կռվիր, հոն հեղափոխություն չկա։ Անհատական քաջագործությունները, սակավաթիվ խումբերու ձեռնարկները հեղափոխություն չեն»[7]։

«Մարտի» տեսաբանները, փնտրելով ազատագրության ուղիներ, երբեմն անդրադառնում էին այլ ժողովուրդների պատմությանը, փորձում վերջիններիս օրինակով սովորեցնել պայքարել, լավագույն արդյունքի հասնելու համար օգտագործել նրանց փորձն ու զերծ մնալ թույլ տված սխալներից։ «Եռագույն դրոշակը» խորհրդանշական վերնագրով խմբագրականում նրանք զուգահեռներ են անցկացնում Իտալիայի և Հայոց ազատագրության ուղիների ու միջոցների միջև։ «Իտալիոյ» ազատության ամբողջ պատմությունը,— գրում է պարբերականը,—կմարմնացնեն Կարիպալտին, Քավուր և Վիքթոր Էմմանուել»[8]։ Գարիբալդին, ըստ հեղինակների, մարմնավորում է ամեն ինչ փշրող և միայն ավերակներ թողնող հեղափոխությունն։ Իսկ Քավուրը՝ «խորհող հանդարտ միտք» քաղաքագետը, պատրաստեց այն բոլոր հանգամանքները, որոնք նախապես ապահովեցին հեղափոխության հաղթանակը։ Բայց սա էլ ամբողջը չէր լինի, եթե չլիներ Էմմանուել թագավորը՝ «ներկայացուցիչ Իտալական ազգին բարոյական և նյութական ուժերու»։ Ոչ պակաս կարևոր գործոն էր համարվում այն, որ իտալացիները սպասեցին հարմար պահի։ «Արդ, մենք ալ ապահովինք սա պայմաններր և սպասենք», ընդգծում է խմբագրականի հեղինակը։ Ցմոռանալով քննադատել իրենց նախորդներին այդ երեք անհրաժեշտ պայմաններից և ոչ մեկը չապահովելու և լոնդոններից միայն հոխորտանքներ տեղալու, իսկ պարտությունից հետո հուսախաբ ու մտամոլոր կեցվածքի համար, հեղինակը եզրակացնում էր. «դրամի, խելքի, անձնվիրության երեք միացած ուժերու եռագույն դրոշակեն առաջնորդվելով, հայ ազգը դեռ կրնա լավագույն ապագա մը հուսալ»[9]։

Պատմական մոտիկ անցյալի դեպքերին անդրադառնալով, պարբերականը նշում էր, որ դիվանագիտությունը, որքան էլ այն լինի խելացի ու խորաթափանց, չի կարող պահպանել ու փրկել ժողովրդին։ Անհրաժեշտ է նաև նյութական ուժ. «Անկախ ազգերու համար այդ ուժը բանակ մը կը կոչվի, գերության մեջ տառապողներուն համար՝ հեղափոխություն»։ Ուստի, անհրաժեշտ է «սիրել այդ բանակը, զորացնել զայն և անոր կրթնիլ, անոր աջակցությամբը Եվրոպան մեզի համար նպաստավորել, ահա ինչ որ ազգին մեծությանը գլխավոր նպատակները պետք է ըլլան»[10]։

Պարզելով իր հայացքները հեղափոխության, նրա շարժիչ ու ղեկավար ուժերի մասին, թերթը գրում էր. «Մեր հեղափոխությունը ոչ թե պետական, այլ ազգային է։ Ամենքս ալ, որովհետև հայ ենք, հավասարապես կհալածվինք առանց որևէ խտրության։ Կուսակալներն ու խուժանը հավասարապես

---

6 Նույն տեղում։

7 Նույն տեղում, № 6։

8 Նույն տեղում, № 2։

9 Նույն տեղում, 1899, № 18։

10 Նույն տեղում

կր կողոպտեն հարուստ հայը, ինչպես հարկահանները հազիվ հացի մը ստակ ունեցող հայը»[11]։

Ապա նշում էր, որ կուսակցությունը բարեփոխել է իր ծրագիրը, նրանից հանել դասակարգերի մասին դրույթը, «ընկերվարական դավանանքը» և թողել զուտ «ազգային ազատության դատը»։ «Հեղափոխությունը ամեն հայու բարեկամ, ամեն հայ հեղափոխության բարեկամ։ Այս է Ազգային հեղափոխության նշանաբանը»[12]։

«Մարտի» կարծիքով, կուսակցության ծրագրերից պետք է հանել այն ամենը, ինչ կարող է մասնաբաժանել ազգը։ «Մեր ձգտումն է մեր հայրենիքի համար իր բոլոր գավակներեն մեկ բանակ կազմել մեր դրոշակով, որուն վրա արյունազարդ տառերով գրված ըլլա «Թշնամին թուրք վարչությունն է»։ Ու ամեն հայ՝ հարուստ թե աղքատ, գործավոր թե վաճառական, տգետ թե զարգացյալ, աշխարհական թե հոգևոր, բարի թե չար, ամեն հայ այդ թշնամիին դեմ կռվելու կոչվի»[13]։

Հայ ազգն ունի ամեն ինչ՝ թե խելք, թե ուժ, թե զգացում, թե դրամ, թե հայրենասիրություն և թե այլ կարողություններ, հայտարարում էր պարբերականը։ Անհրաժեշտ է միայն ունենալ մի կենտրոն, որ ղեկավարի ոգանք, համախմբի, գրոհի տանի թշնամու դեմ ու հասնի հաղթանակի։ Իսկ այդ կենտրոնը հեղափոխությունը պետք է ստեղծի բնական ճանապարհով, արհեստականը դատապարտված է կործանման։ Նորաստեղծ կենտրոնը կամ համազգային իշխանությունը «հզորապես պիտի կազմակերպե աղգին բոլոր ուժերը, ու թե կռվի դաշտին վրա, թե դիվանագիտության առաջ [illegible] ներկայանա հայ ազգը և անոր ազատագրությունը պիտի ապահովե»[14]։

Պատմությունը դաժան է դրել հարցը, գտնում էր թերթը, «ոչ հայ հեղափոխականին սուրը այլևս իր պատյանը կր դառնա. ոչ ալ թուրք իշխանությանը։ Պատերազմը անդուլ, անդադար հարատևությամբ պիտի շարունակվի, մինչև որ կռվողներեն մեկը տեղի տալու պարտավորվի»։ Եթե մենք տեղի տանք, այդ օրը հայության «բնաջնջումին ղողանջը պիտի լսվի»[15]։

Պրոպագանդելով ազգային ուժերի համախմբման գաղափարը, թերթը նկատի ուներ բացառապես արևմտահայությանը, իսկ արևելահայերի միությունը համարում էր վնասակար։ «Եվ Թուրքիո հայերը ընդունակ չեն իրենց մեջ ուժ գոյացնելով ղեկավարել իրենց գործերը, անօգուտ է, և մինչև իսկ վնասակար, բնական ճամբեն դուրս գործելու մղել զիրենք Ռուսիո հայերուն միջոցով։ Իսկ եթե Թուրքիո հայերը հասած են այն զգացումին, որով կարող են խորհիլ ինչ որ իրենց պետք է և գործել անոր համեմատ, ան ատեն միտք չունին Թուրքահայերու վերին տեսչությանը»[16]։

Պատմական էքսկուրս կատարելով, թերթը նշում էր, որ Գր. Արծրունին անցյալում աջակցում էր արևմտահայերին (հոգևոր առումով՝ իր «Մշակով» և նյութապես՝ հավաքելով և արևմտահայերին որպես օգնություն փոխանցելով ավելի քան 100.000 ռուբլի գումար—Ս. Ս.), բայց առանց միջամտելու նրանց գործերին, գտնելով, որ եթե նրանք ի զորու չեն ազատագրվելու, դրսից ոչինչ անել հնարավոր չէ, որ արևմտահայերն իրենք ավելի լավ գիտեն, ավելի պարզ են պատկերացնում իրենց անելիքները։ Այդպես չեն վարվում ժնևցի կովկասահայերը։ Նրանք ոչ միայն միջամտում են արևմտահայերի գործերին, այլև ձգտում են ղեկավարել նրանց շարժումները, առանց ճանաչելու Արևմտյան Հայաստանը, նրա վրին փաթաթում սոցիալիզմի վարդապետությունը[17]։ Նրանք կամենում են մոռացության տալ հայրենասիրու-

11 Նույն տեղում, 1899, № 19։
12 Նույն տեղում, 1901, № 28։
13 Նույն տեղում, 1900, № 26։
14 Նույն տեղում։
15 Նույն տեղում։
16 Նույն տեղում, 1897, № 3։
17 Նույն տեղում։

թյունը և այն փոխարինել ընկերվարությամբ, ձգտում են ոչ թե համախմբել ազգը, այլ պառակտել։ «Հնչակը» «մոռցնել էր տալիս հայրենասիրությունը, անոր տեղը կը դներ «սոցիալիզմը», ժողովուրդին համախմբելու փոխարեն «անոր դասակարգերու կբաժներ»։ Նրանց գործունեությունը աղետաբեր եղավ շատ արևմտահայերի, հատկապես վասպուրականցիների համար։ Արևմտահայերի «բոլոր դժբախտությունները Կովկասի հայոց ձեռներեցության հետևանք են»[18]։

«Մարտը» գտնում էր, որ եվրոպական տերությունների օգնությունն անհրաժեշտ է արևմտահայության ազատագրության համար, բայց միայն այդ հույսով չպետք է ապրել. հարկավոր է ծավալել նաև ազգային ակտիվ գործունեություն։ «Հայկական դատը կորսված պետք է համարենք, եթե հայ ազգը իր ամբողջ գործունեությունը դիվանագիտական և օրագրական աշխատության նվիրե»[19]։ Թերթը պատմական փաստերով ցույց էր տալիս, որ Թուրքիայի տիրապետության տակ ընկած ժողովուրդները իրենք են ձեռնարկել իրենց ազատագրության գործը, իսկ Եվրոպան օգնության է հասել «միշտ վերջին պահուն»[20]։

Պատասխանելով այն առարկումներին, թե Թուրքիան օգտվում է տերությունների հակասություններից և պահպանում իր ամբողջականությունը և, հետևաբար, արևմտահայության ազատագրումը անհնարին է, թերթը նշում էր. «Եվրոպացիները ատեն մը իրարու հետ կի՛յնան, բայց օր մըն ալ համաձայնության մը կը հանդին Թուրքիո մորթին վրա»[21]։ «Մարտը» հավատացած էր, որ Անգլիան, Ֆրանսիան և Գերմանիան վերջին հաշվով պետք է Թուրքիան մասնատեն կամ այնտեղ անցկացնեն վարչական բարելավումներ։ Ուստի, «մեզի՝ հայերուս կը մնա բավական արթուն ու խելացի գտնվիլ, որպեսզի ոչ միայն վատթար վարչության մը լուծեն ազատինք, այլև օտարազգի դրամատերերուն ստրուկներն ալ չդառնանք»[22]։

«Հայկական խնդիրը և Ռուսիո քաղաքականությունը» խմբագրական ծավալուն հոդվածաշարով անդրադառնալով Ռուսաստանին, պարբերականը գրում էր, որ նրա քաղաքականությունը հայերի համար եղել է «շատ փոփոխական՝ մերթ նպաստավոր, մերթ աննպաստ»[23], որ ունենալով վարպետ դիվանագիտություն, Ռուսաստանը մասնակցում էր թե Բալկաններում և թե Այսրկովկասում տեղի ունեցող իրադարձություններին[24]։ Թերթի կարծիքով, Ռուսաստանը ուզում է զավթել Թուրքիան, իսկ վերջինս իր պաշտպանության համար պետք է բարելավի արևմտահայերի կացությունը, դարձնի նրանց իր բարեկամները և այդպիսով իր ու Ռուսաստանի միջև ամուր պատնեշ ստեղծի։ «Թուրքիո կործանումը Ռուսիո նպատակն է եղած, է, և պիտի ըլլա, այդ նպատակը անփոխարինելի է, սակայն անոր հասնելու միջոցները փոփոխական, ուստի կրնա պատահիլ որ այդ «միջոցները» նպաստավորեն մեր ազգային շահերն ալ, բայց կրնան անոնց ալ հակառակիլ։ Մեզի կմնար, և դեռ կմնա, մեր ազգային շահերը չստրկացնել պետության մը, որքան ալ մեծ ըլլա ան քաղաքական շահերուն»[25]։ Իսկ եթե Թուրքիան շարունակի հակահայկական քաղաքականությունը, «տարակույս չի կա, թե ամբողջ հայությունը գիտակցորեն զորեղ գործիք մը պիտի ըլլա Ռուսիո ձեռքերուն մեջ Թուրքիո քայքայման նպատակին վազընդփույթ հաջողման համար»[26]։

---

18 Նույն տեղում, 1898, № 14։
19 Նույն տեղում, 1901, № 28։
20 Նույն տեղում, 1899, № 16։
21 Նույն տեղում։
22 Նույն տեղում, 1899, № 17։
23 Նույն տեղում, 1898, № 9։
24 Նույն տեղում, 1897, № 7։
25 Նույն տեղում, 1898, № 9։
26 Նույն տեղում, 1900, № 23։

Այս է հիմնական բովանդակությունը «Մարտ» թերթի, որը հրատարակվեց ընդամենը չորս տարի, սակայն ունի իր նշանակալից դերը հայ մամուլի պատմության ընդհանուր կտավի վրա։ Իսկ այն ամբողջական կլիներ, եթե պահպանված և մեզ հասած լիներին հրատարակված բոլոր համարները։

«Նոր կյանք» ամսագիրը (1898—1902, Լոնդոն) ևս Վերակազմյալ հնչակյան կուսակցության օրգանն էր։ Ուներ խմբագրական մարմին, սակայն ըստ էության գլխավոր խմբագիրն ու հիմնական գաղափարախոսը դարձյալ Արփիար Արփիարյանն էր։ Այս պարբերականը լույս էր տեսնում ամիսը երկու անգամ՝ յուրաքանչյուր ամսվա 1-ին և 15-ին։ «Մարտ» թերթը և «Նոր կյանքը» կանգնած լինելով միևնույն «գաղափարական գետինին վրա», ըստ էության լրացնում էին միմյանց։ Կար մի չնչին տարբերություն՝ «Նոր կյանքը» «Մարտի» նման լինելով ազգային, քաղաքական, նաև գրական հանգես էր և միշտ հավատարիմ էր մնում իր այդ կոչմանը՝ մեծ տեղ տալով դեղարվեստական ստեղծագործություններին։ Մեզ առավելապես հետաքրքրողը «Նոր կյանքի» ազգային-քաղաքական ձգտումներն են, նրա հիմնական ու գերագույն նպատակը՝ ազգային-ազատագրության ուղիների որոնումը, ազգափրկիչ ծրագրերի նախապատրաստումն ու այդ ծրագրերի իրագործման տակտիկայի մշակումը։ Ճանաչողական մեծ արժեք ունեն Հայկական հարցի վերաբերյալ տեսությունները և ազգային կյանքին նվիրված նյութերը։

Իր առաջին համարներից մեկում «Նոր կյանքը» արևմտահայերի ազատագրությունը տեսնում էր Թուրքիայի կազմում հայկական ինքնավարության ստեղծման մեջ։

Որպեսզի հասկանալի լինի «Նոր կյանքի» քաղաքական հայացքը, շեշտենք, որ այն Վերակազմյալ հնչակյանների տպագիր օրգանն էր։ Վերակազմյալները, խոսելով համազգային հեղափոխության կամ ապստամբության մասին, հանդես էին գալիս որպես ռեֆորմատորներ, բուրժուական բարեկարգումների քարոզիչներ, որովհետև պահանջում էին Արևմտյան Հայաստանի ինքնավարություն Թուրքիայի սահմաններում՝ եվրոպական վերահսկումով։ Նրանք չունեին ազգային ծրագիր, չէին խոսում Արևմտյան Հայաստանում հողային բտրգ ու կնճռոտ հարցի լուծման մասին։ Իրենց կարծիքով, այդ նպատակին հասնելու համար հայերը պետք է համախմբվեն, միավորվեն՝ առանց դասակարգային տարբերության կամ խտրականության։ Ազգի փրկությունը «ազգային մեկ ծրագրե և միասիրտ աշխատութենե կախում ունի»[27]։ Նկարագրելով կոտորածներից հետո հայերի դժնդակ կացությունը, ամսագիրը գրում էր. «Ամենքս ալ ըմբռնած ենք, թե կրթությամբ չէ միայն, որ ազգությունիս պիտի պահպանենք, բարոյացմամբ չէ միայն, որ ապագանիս պիտի ապահովենք, քաղաքականությամբ չէ միայն, որ մեր իրավունքներուն պիտի տիրանանք, նյութական զորությամբ չէ միայն, որ պիտի հաղթանակենք։

Գրկության գրավականը ազգային ամեն ուժերուն միաբան գործավարությամբ պիտի ապահովի»[28]։

Այնուհետև ամսագիրը շարունակում էր. հայը պետք է իմանա, որ «իր փրկությունը իրմեն միայն կախում ունի», որ նա «ամեն բանե առաջ, ամեն բանե ավելի... պետք է ինքն իր վրա վստահեր, իր սեփական ուժին կռթներ»։ Հոգևորականները չպետք է քարոզեն հնազանդություն, հարուստները պարտավոր են բացել իրենց քսակը ազատության գործի համար։ Ընդհանուր գործի համար չպետք է լինեն անտարբերներ, ու չեզոքներ, փախուստի բոլոր դռները անհրաժեշտ է փակել, չպետք է ճանաչել դասակարգային խտրականություն, քանզի մենք բոլորս ստրուկներ ենք. «Պանքիր Մկրտիչը այնքան ստրուկ է, որքան բեռնակիր Մրտոն»[29]։

---

27 Նոր կյանք, 1899, № 1, էջ 2։

28 Նույն տեղում, 1801, № 5, էջ 50։

29 Նույն տեղում, 1901, № 18, էջ 243։

Եթե հայը ներկա օրերուն ևս շարունակի «իրարախույս, իրարավեր» վարքագիծը, ուրեմն արժանի է ոչնչացման։ Պատմությունը թող նրա շիրմի վրա գրի. «Հոս կհանգչի ստրուկ հայությունը... ջարդվելու արժանի ցեղ մըն էր»[30]։ Ազատությունը միշտ և ամենուր ձեռք է բերվել արյան դնով «Հայ հեղափոխությունը բացառություն մը չի պիտի կրնար անշուշտ ստեղծել պատմության մեջ»[31]։

«Նոր կյանքը» գտնում էր, որ հայ-թուրքական պատերազմը միայն այն ժամանակ կվերջանա, երբ սուլթանական իշխանությունները հրաժարվեն հայության բնաջնջման իրենց քաղաքականությունից և նրա համար հաստատեն նպաստավոր վարչակարգ, այլապես «մեր ազգային կռիվը կը շարունակվի, ու պետք չէ տարակուսել, թե վերջնական հաղթանակը Թուրքիո իշխանության չի մնա»[32]։ Արևմտահայության ազատագրման համար եվրոպական տերությունների օգնությունը անհրաժեշտ է, բայց դրա համար հայերը պետք է իրենց ազգային պահանջները հարմարեցնեն եվրոպացիների շահերին։ Վերլուծելով անցյալի դեպքերը, «Նոր կյանքը» սխալ չէր համարում Եվրոպայից օգնություն ստանալու գաղափարը. սխալ էր այն, որ հայերը, հույսը դնելով Արևմուտքում «նստող» հայ «հեղափոխական վարիչների վրա... և անոնց ապավինելով՝ պետք չտեսան գոնե առժամյա ընդդիմադրության մը նախապատրաստություններ ընել»[33]։ Ուստի կոչ էր անում՝ չկրկնել անցյալի սխալները։ Հայը այլևս չի հավատում, թե Եվրոպայի միջամտությամբ շուտով ձեռք է բերելու ինքնավարություն, սակայն չի էլ հուսահատված, թե այսքան աղետներից հետո Հայաստանի «բարվոքումն» այլևս անկարելի է[34]։ Նա պետք է շարունակի մաքառել իր ազատության համար։

«Նոր կյանքը» անդրադառնում էր նաև կրոնի հարցերին և գրում, որ «իրենց ազգային կրոնքի մեջ կը փնտռեն իրենց ինքնապահպանության ապահովություններեն մեկը, և թերևս գլխավորը»[35]։ Արձանագրելով, որ հայության մեջ լուսավորչականների կողքին երևան են եկել կաթոլիկներ, ուղղափառներ և ուրիշ այլադավաններ, հանդեսը նշում էր, որ դրա հետևանքով ներազգային հակասություններն ավելի են սրվում։ Ամսագիրը հայության համախմբման գլխավոր պայման էր համարում համազգային գիտակցության արթնացումը։ Համենայն դեպս, նրա վիճակն այնպիսին է, որ չի կարելի զբաղվել կրոնական բզկտոցներով. «Մեր ազգային զարգացումը, մեր տոհմային նկարագիրը, ընդհանուր հայության շահերը չեն ներեր, որ կրոնական ատելությամբ լցված սրտերով զիրար բզկտենք։ Համոզումներն ինչ որ ալ ըլլան, հարկ է իրողություններուն համակերպիլ ու ցեղային արյունի և ազգայնության գաղափարին մեջ զիրար ընդգրկել»[36]։

Պարբերականը արևմտահայության ազատագրության գործում կանգ էր առնում Ռուսաստանի դերի վրա և այն կարծիքն էր հայտնում, որ եթե Ռուսաստանը նվաճի Արևմտյան Հայաստանը, արևմտահայերը կորուստ չեն ունենա։ Բայց Թուրքիան կարող է շատ բան կորցնել։ Եվ որպեսզի նա անկորուստ մնա, պետք է բարեփոխվի՝ ապակենտրոնացնելով բոլոր ժողովուրդներին, յուրաքանչյուրին ինքնավարություն տալով[37]։

Ամսագիրը քննադատում էր Կ. Պոլսի հայոց պատրիարք Մ. Օրմանյանին, նշելով, որ նա պաշտպանում է սուլթանի քաղաքականությունը, հոգևորականությանը դուրս է բերում ազգի դեմ և դրանով իսկ ջլատում համազ-

---

30 Նույն տեղում, № 19, էջ 276։

31 Նույն տեղում, № 18, էջ 276։

32 Նույն տեղում։

33 Նույն տեղում, 1893, № 14, էջ 212։

34 Նույն տեղում, 1900, № 9, էջ 130։

35 Նույն տեղում, 1899, № 20, էջ 310։

36 Նույն տեղում, 1899, № 22, էջ 347։

37 Նույն տեղում, 1898, № 4, էջ 50։

դային ուժերը[38]։ Այս պայմաններում հայ ժողովուրդը պետք է պահպանի իր ազգային կրոնական ավանդույթները, մանավանդ, երբ դրանք ապահովված են թուրքական ներքին օրենքներով ու միջազգային դաշնագրերով, պետք է բողոքի Օրմանյանի վարքագծի դեմ[39]։

Իհարկե, սրանով չեն սահմանափակվում ամսագրի ընդգրկած հարցերն ու քննարկած խնդիրները։ Ավելացնենք նաև, որ Վերակազմյալ հնչակյանները, անջատվելով հնչակյաններից, ուզեցին իրենց ձեռքը վերցնել Հայկական Դատը։ Այդ նպատակով համախմբվեցին Արփիարյանի շուրջը, որը ոչ միայն պաշտպանեց ու առաջ չտարավ Վերակազմյալների ձեռնարկումը, այլև վիժեցրեց այն։ Եվ դա պատահական չէ, «Արփիարյանն ինքը չէր հավատում հեղափոխությանը»[40]։ Հակառակորդները Արփիարյանին մեղադրում էին, որ նա հեղափոխական գործը վերածել է հրատարակչական ընկերության։ Համենայն դեպս, նա իրենից վանեց կուսակցության կարող ուժերին և մնաց մենակ։ 1901 թ. Ա. Արփիարյանը հեռացավ Վերակազմյալ հնչակյանների շարքերից։ Այս հանգամանքն էլ դարձավ այն հիմնական պատճառը, որ իրար հետևից դադարեցին լույս տեսնել թե «Մարտը» և թե «Նոր կյանքը»։

ИЗ ИСТОРИИ ПЕРЕФОРМИРОВАННОЙ ГНЧАКСКОЙ ПЕЧАТИ («МАРТ», «НОР КЯНК»)

С. Т. САРКИСЯН

Резюме

Группа западноармянских деятелей, будучи недовольной политикой, проводимой лондонским центром гнчакистов, создала новую партию под названием «Вераказмял (переформированный) Гнчакян». Свои идейные убеждения она пропагандировала на страницах периодических изданий «Нор Кянк», «Март», «Дзайн Айреняц», «Азг» и т. д. Вначале наиболее известными изданиями были газета «Нор Кянк» и журнал «Март», которые издавались от имени редакционной коллегии, но велика была в этих изданиях заслуга западноармянского деятеля Арпиара Арпиаряна. Главной темой изданий были Армянский вопрос, пропаганда идеи национального согласия и поиск путей освобождения западных армян от турецкого ига, что, однако, не мешало им оставаться либералами-реформаторами.

В 1901 г. А. Арпиарян покинул ряды партии «Вераказмял», в результате чего газета «Март» и журнал «Нор Кянк» перестали издаваться.

---

38 Նույն տեղում, 1901, № 3, էջ 18։

39 Նույն տեղում, 1899, № 12, էջ 177։

40 «Ասող», 6. VII. 1907։